ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 180 – Ա **01 ապրիլի 2021 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Առողջապահության նախարարի 2021 թվականի մարտի 25-ի N ԱԱ/04/5896-2021 գրության պահանջը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը, այդ թվում նաև հանրային իրազեկման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մանուկյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ
Վարդանյան Լուսինե	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Սաֆոյան Աննա	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Երիցյան Մանուկ	- «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն ծառայության ղեկավար
Ստեփանյան Գևորգ	- «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի թերապևտիկ բաժանմունքի վարիչ

Հարությունյան Հասմիկ - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Գեղարքունիք» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Վարդանյան Ռուզաննա - ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Գեղարքունիք» մասնաճյուղի համաճարակաբան, իմունականխարգելման գործընթացի պատասխանատու /համաձայնությամբ/

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝ Գեղարքունիքի մարզում կազմակերպել.

1) COVID-19-ի դեմ պատվաստումների ներդրման միջոցառումների, միկրոպլանավորման և Գեղարքունիքի մարզպետին ու Առողջապահության նախարարությանը հաշվետվությունները պարբերաբար ներկայացնելու գործընթացները,
2) COVID-19-ի դեմ պատվաստումների գործընթացի մշտադիտարկումները, առկա խնդիրները բացահայտելու համար ամենօրյա քննարկումները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
3) հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը մշտադիտարկելու և արագ արձագանքելու գործընթացը,
4) բուժաշխատողների համար խորհրդակցություններ կազմակերպելու և անցկացնելու աշխատանքները,
5) հանրային իրազեկման աշխատանքները՝ տեղական ԶԼՄ-ների միջոցով:

01.04.2021

ԳՆԵՐ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ GNEL SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ